# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

# ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

# 2022-2026թթ.

# 5-ԱՄՅԱ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ___________թ.

ԹԻՎ ______-Ն ՈՐՈՇՄԱՄԲ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ 2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**Նոյեմբերյան համայնքի ղեկավարի ողջույնի խոսք** ..... 4

**Ներածություն** ..... 6

**1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ** ..... 6

1.1 Համայնքի մասին ..... 6

1.2 Տեղական ինքնակառավարման մարմիններ ..... 7

1.3 Համայնքի ժողովրդագրություն ..... 7

1.4 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ ..... 9

1.5 Տարածքում նախատեսվող/շարունակվող/ հանրապետական, մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ ..... 10

**1.6.Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում** ... 11

1.7 Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակ, համայնքային ենթակայության հիմնարկներ ..... 20

1.8 Համայնքում առկա իրավիճակն՝ ըստ ոլորտների ..... 29

1.9 Համայնքի ուժեղ և թույլ կողմեր, զարգացման հնարավորություններ և ռիսկեր ..... 32

**2.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ** ..... 37

2.1 Համայնքի զարգացման տեսլական ..... 37

2.2 Համայնքի զարգացման ռազմավարական ուղղությունները ..... 37

2.3 Համայնքի կառավարման արժեքները ..... 37

**Զարգացման ծրագրեր և մոտեցումներ՝ ըստ ոլորտների** ..... 38

Գյուղատնտեսություն ..... 38

Ջրսաշրջություն ..... 39

Բնության և շրջակա միջավայրի պահպանություն ..... 40

Սպորտ, առողջ ապրելակերպի խթանում ..... 40

Նորարարական տեխնոլոգիաների ոլորտ ..... 41

Աղետների ռիսկերի կառավարում, քաղաքացիների պաշտպանություն ..... 41

Գործարար միջավայրի բարելավում, զբաղվածության և ձեռնարկատիրության խթանում 41

Սոցիալապես խոցելի բնակիչների բարեկեցության բարձրացում, զբաղվածության ապահովում ..... 42

Կանանց և երիտասարդների հզորացման ծրագրեր ..... 43

2022թ. իրականացվելիք ծրագրեր ........ 44
Սուբվենցիոն ծրագրեր` ........ 44
Սոցիալական, կրթական և մշակութային ծրագրեր ........ 46
«0-18 տ հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ծառայություններ» ծրագրի անձնագիր ........ 49
«18 տ. բարձր հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ծառայություններ» ծրագրի անձնագիր ........ 51
«Տարեցների խնամքի կենտրոն Նոյեմբերյան խոշորացված համայնքում» ծրագրի անձնագիր ........ 52
«Ընտանիքների աջակցության ծառայություններ» ծրագրի անձնագիր ........ 54
«Մասնագիտական աճի, կարերիայի կենտրոն» ծրագրի անձնագիր ........ 56
«Գրադարանարճարան» ծրագրի անձնագիր ........ 60
Համայնքային ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված այլ ծրագրեր ........ 63
Համայնքում 2022թ.-ին իրականացվելիք այլ ծրագրեր ........ 86
1.Արվեստի տուն Բերդավանում ........ 86
2. Թափառող կենդանիների դեմ աշխատանքների իրականացում. ........ 86
3.Համայնքի հանգստի գոտիների` աղբյուրների բարեկարգում ........ 87
Այլ ծրագրեր ........ 87
Ամփոփում ........ 88

# Նոյեմբերյան համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

**Նոյեմբերյան համայնքի հարգելի՛ բնակիչ,**

2021թ. դեկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում ձևավորվել է նոր միավորված համայնք՝ 19 բնակավայրերով, իր ուրույն խնդիրներով, նոր մարտահրավերներով, բայց և զարգացման ավելի լայն հնարավորություններով:

Նոյեմբերյանն այսօր ունի բազմաթիվ խնդիրներ՝ կապված ինչպես արտաքին անվտանգության, այնպես էլ բնակիչների շրջանում զբաղվածության ցածր մակարդակի, արտագաղթի, առկա ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակի, տարբեր ոլորտներում մեծածավալ աշխատանքների իրականացման հրատապության հետ:

Ներկայացվող 5-ամյա ծրագրով մենք սահմանում ենք զարգացման այն բարձր նշաձողը, որին պետք է հասնենք մեր միասնական ուժերով, յուրաքանչյուրիս՝ մեր համայնքի հանդեպ ունեցած սրտացավությամբ, տեղական ինքնակառավարման գործընթացին ակտիվ մասնակցությամբ:

Առաջիկա 5 տարիների համար մեր զարգացման **տեսլականն է՝**

Նոյեմբերյանն անվտանգ, պահպանված շրջակա միջավայրով, կայուն զարգացող համայնք է՝ հարմարավետ տեղի բնակիչների, գրավիչ՝ զբոսաշրջիկների և հեռանկարային՝ ներդրողների համար: Համայնքում լուծված են բնակիչների բարեկեցիկ կյանքի ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքային հիմնախնդիրները, ձևավորված է կանաչ գյուղատնտեսության, նորարարական զբոսաշրջության, սոցիալական բարձր պատասխանատվությամբ բիզնեսի և թվային ժամանակակից տեխնոլոգիաների կայուն զարգացման համար անհրաժեշտ միջավայր: Համայնքի բնակիչներն ունեն տեղական ինքնակառավարման գործընթացին լիարժեք մասնակցության, սեփական կարողությունների իրացման, ֆորմալ և ոչ ֆորմալ որակյալ կրթության ստացման, մշակութային և մարզական պահանջմունքների բավարարման, հանգստի և ժամանցի կազմակերպման, առողջ ապրելակերպի պահպանման, զբաղվածության և ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունները:

Այն հիմնված է լինելու հետևյալ **ռազմավարական ուղղությունների վրա**.

1. Համայնքում ծանր մետաղական հանքարդյունաբերության բացառում, շրջակա միջավայրի անաղարտ պահպանման առաջնայնություն:
2. Նորարարական տեխնոլոգիաների ներդրմամբ գյուղատնտեսության զարգացում:
3. Համայնքի՝ որպես զբոսաշրջային գրավիչ վայրի բրենդավորում, տուրիստական հոսքերի ավելացում և այս համատեքստում ենթակառուցվածքների բարելավում:
4. Ժամանակակակից թվային տեխնոլոգիաների ոլորտում կրթական և աշխատանքային կառույցների ձևավորում, ծրագրերի իրականացում:

5. Գործարար միջավայրի զարգացում, բնակիչների ձեռնարկատիրական կարողությունների զարգացում, ներդրումների խթանում:
6. Սոցիալապես խոցելի բնակիչների բարեկեցության բարձրացում:
7. Կանանց և երիտասարդների հզորացում, հասարակական ակտիվության խթանում:
8. Մշակույթի և կրթության զարգացում, նոր հնարավորությունների ստեղծում:
9. Շրջակա միջավայրի պահպանություն, վերականգնվող էներգետիկայի ենթակառուցվածքների հիմնում և զարգացում համայնքում:

Զարգացման 5-ամյա ծրագրի վերաբերյալ մեր կողմից իրականացվել են թվով 7 հանրային լսումներ՝ ինչպես համայնքի ավագանու անդամների, բնակավայրերի վարչական ղեկավարների, այնպես էլ ոլորտային փորձագետների ու բոլոր բնակավայրերից ակտիվ բնակիչների ներգրավմամբ:

Սա դեպի զարգացում տանող մեր նպատակակետն է, որին հասնելու ենք թափանցիկ, հաշվետու կառավարման և մեր բնակիչների հետ մշտական ակտիվ աշխատանքի միջոցով:

Խաղաղություն, զարգացում և արևշատություն մեր համայնքին:

**ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՍԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ**

## Ներածություն

Պլանավորումը ցանկացած գործունեության կառավարման կարևոր և պարտադիր գործառույթ է, քանի որ այդ գործընթացով տեղի է ունենում զարգացման հնարավորությունների պարզում, նպատակների և առաջնայնությունների որոշում, դրանց հասնելու ուղիների և մեթոդների սահմանում:

Պլանավորման օբյեկտ են նաև համայնքի սոցիալ տնտեսական գործունեության տարբեր ոլորտները, որոնք կոչված է լուծել տեղական ինքնակառավարման մարմինը: Այն նախ, համայնքի տարածքում գործող միակ սուբյեկտն է, որն ընտրված է տեղի բնակչության կողմից և կոչված է արտահայտելու նրա շահերն ամբողջությամբ, և երկրորդ՝ այն նաև համայնքում սեփական պատասխանատվությամբ գործող տարածքային կառավարման ինքնուրույն օղակ է, որը համայնքային սեփականությունը տնօրինելու և համայնքային նշանակության հարցերը լուծելու իրավունք և կարողություն ունի:

Համայնքի զարգացման ծրագիրը իր մեջ ներառում է համայնքի, որպես մեկ ամբողջության զարգացման ռազմավարությունը իրական նպատակների շրջանակներով, նպատակներ, որոնք ձևավորվում են համայնքի զարգացման վրա արտաքին միջավայրի ներազդեցության, սոցիալ-տնտեսական ներքին իրավիճակի հաշվառման, ունեցած հնարավորությունների / բնական, աշխարհագրական, տնտեսական, ֆինանսական, մարդկային/ գնահատման արդյունքում:

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 1.1 Համայնքի մասին

Համաձայն Համաձայն «Վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում 06.10.2021թ. ուժի մեջ մտած փոփոխությունների՝ Նոյեմբերյան համայնքի մեջ ընդգրկվել են նաև Այրում և Կողբ՝ նախկինում արդեն իսկ միավորված համայնքները: Ներկայում այն ընդգրկում է հետևյալ 19 բնակավայրեր՝ Նոյեմբերյան, Այրում, Արճիս, Բագրատաշեն, Բաղանիս, Բարեկամավան, Բերդավան, Դեբեդավան, Դեղձավան, Դովեղ, Ջորական, Լճկաձոր, Կոթի, Կողբ, Հաղթանակ, Ոսկեպար, Ոսկեվան, Պտղավան և Ջուջևան:

Նոյեմբերյան համայնքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի հյուսիսային, Հայաստանի Հանրապետության հյուսիս-արևելյան մասում: Համայնքի կենտրոնի հեռավորությունը Իջևանից 55 կմ է, Երևանից՝ 195 կմ: Համայնքի ճանապարհային ցանցի առանցքը Հայաստանը

Վրաստանի հետ կապող Մ16 միջպետական ավտոճանապարհի համայնքի տարածքով անցնող հատվածն է:

Համայնքում գործում են մի շարք թեթև արդյունաբերության և վերամշակող փոքր ձեռնարկություններ, որոնց արտադրական հզորություններն ու արտահանման ծավալները մնում են ցածր մակարդակի վրա:

Դեռևս ցածր մակարդակի վրա է գյուղատնտեսությունը: Ոռոգման ջրի սակավության հետևանքով գյուղատնտեսության գերակա ճյուղ է դարձել անասնապահությունը: Սակայն արոտավայրերի հեռավորության, տեղական արտադրության կերային կուլտուրաների բազայի աղքատության, ինչպես նաև սպառման հետ կապված խնդիրների պատճառով արգելակված է նաև այս ճյուղի զարգացման գործընթացը:

Առկա են հիմնախնդիրներ նաև բնակիչների զբաղվածության, սոցիալական բարեկեցության տեսանկյունից: Աշխատատեղերի պակասն ու սոցիալական տարբեր հիմնախնդիրները պատճառ են դառնում նաև բնակիչների արտագաղթի՝ հիմնականում աշխատանքային միգրացիայի:

## 1.2 Տեղական ինքնակառավարման մարմիններ

2021թ. դեկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ համամասնական ընտրությունների արդյունքում ձևավորվել է 21 հոգուց բաղկացած ավագանի, և համայնքի ղեկավար է ընտրվել Արսեն Լիպարիտի Աղաբաբյանը:

## 1.3 Համայնքի ժողովրդագրություն

Նոյեմբերյանն ունի 32730 բնակիչ: Համայնքի բնակչության թիվն ըստ բնակավայրերի՝

Նոյեմբերյան-6133, Այրում – 2675, Արճիս - 1064, Բագրատաշեն- 2833, Բաղանիս-742, Բարեկամավան-466, Բերդավան-3529, Դեբեդավան-658, Դեղձավան -456, Դովեղ-617, Ջորական-1099, Լճկաձոր-402, Կոթի -2158, Կողբ-4966, Հաղթանակ- 1180, Ոսկեպար-908, Ոսկեվան-1407, Պտղավան - 874 և Ջուջևան -563:

*Աղյուսակ 1. Նոյեմբերյանի բնակչության թիվը*



*Աղյուսակ 2. Նոյեմբերյանի տնային տնտեսությունների թիվը*




*Աղյուսակ 3. Նոյեմբերյանի բնակչության ժողովրդագրական կազմը*

| № | Ցուցանիշներ | Նոյեմբերյան համայնք |
|---|---|---|
| 1 | տնային տնտեսություններ | 8360 |
| 2 | բնակչության թիվ, որից | 32730 |
| 3 | 0-6 | 2893 |
| 4 | 7-17 | 4499 |
| 5 | 18-63 | 19409 |
| 6 | 63-ից բարձր | 5333 |
| 7 | կին | 16549 |
| 8 | տղամարդ | 15585 |
| 9 | կենսաթոշակառուներ | 5333 |
| 10 | փախստականներ | 157 |

| | | |
|---|---|---|
| 11 | միակողմանի ծնողազուրկ | 228 |
| 12 | երկկողմանի ծնողազուրկ | 37 |
| 13 | Հայրենական պատերազմի մասնակիցներ | 1 |
| 14 | Արցախյան պատերազմի մասնակիցներ | 157 |
| 15 | հաշմանդամներ | 836 |
| 16 | զբաղվածներ | 13496 |
| 17 | գործազուրկներ | 8033 |
| 18 | ընտանեկան նպաստ ստացողներ | 687 |
| 19 | Արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքներ | 53 |

## 1.4 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակ

**Նոյեմբերյան համայնքի հողային ռեսուրսները՝**

*Աղյուսակ 4.*

| Հ/Հ | Բնակավայրը | Բնակավայրի վարչական տարածքը /հա/ | Ադրբեջանի հետ սահմանը /կմ/ | Գյուղ. Նշանակության հողերը/հա/ |
|---|---|---|---|---|
| **1.** | **Նոյեմբերյան** | 2688,04 | 0 | 1068.81 |
| **2.** | **Այրում** | 163.19 | 0 | 0 |
| **3.** | **Արճիս** | 1904.21 | 0 | 943.42 |
| **4.** | **Բագրատաշեն** | 2290 | 0 | 2065 |
| **5.** | **Բաղանիս գյուղ** | 2384,55 | 4 | 915,41 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **6.** | **Բարեկամավան գյուղ** | 1977,38 | 38 | 1177,34 |
| **7.** | **Բերդավան գյուղ** | 3969,41 | 18 | 3400,57 |
| **8.** | **Դերեղավան** | 786.81 | 0 | 735,6 |
| **9.** | **Դեղձավան** | 625.57 | 0 | 589.7 |
| **10.** | **Դովեղ գյուղ** | 1937,93 | 16 | 1109 |
| **11.** | **Զորական** | 1805,76 | 0 | 1657 |
| **12.** | **Լճկաձոր** | 2159 | 0 | 2068 |
| **13.** | **Կողբ** | 11194 | 7 | 4015 |
| **14.** | **Կոթի գյուղ** | 5011,52 | 38 | 3402,22 |
| **15.** | **Հաղթանակ** | 1659 | 0 | 1450 |
| **16.** | **Ոսկեպար գյուղ** | 6395,12 | 5 | 2430,51 |
| **17.** | **Ոսկեվան գյուղ** | 2790,7 | 3 | 1113,42 |
| **18.** | **Պտղավան** | **570,57** | **0** | **482,0** |
| **19.** | **Ջուջևան գյուղ** | 6648,15 | 0 | 1327,29 |

## 1.5 Տարածքում նախատեսվող/շարունակվող/ հանրապետական, մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրեր ու միջոցառումներ

1. Արճիս, Հաղթանակ և Պտղավան համայնքներում ավարտվել են մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքները:
2. Այրումում «Շեն» բարեգործական ընկերության ֆինանսավորմամբ իրականացվում է մանկապարտեզի լրացուցիչ մասնաշենքի հիմնանորոգում:
3. Բագրատաշենում իրականացվել են մանկապարտեզի մասնակի վերանորոգման աշխատանքներ, ինչից հետո մանկապարտեզը սկսել է գործել:

4. Ընթացքի մեջ են Նոյեմբերյանի քաղաքային զբոսայգու բարեկարգման աշխատանքները:
5. Այրումում կատարվել է դեպի դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատում:
6. Նոյեմբերյանում իրականացվել են բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ:
7. Պտղավան բնակավայրում ՄԱԿ-ի ֆինանսավորմամբ հիմնվել է ագրո զարգացման կենտրոն:
8. Նոյեմբերյանում իրականացվել են փողոցների տուֆապատման աշխատանքներ:
9. Կողբում իրականացվել են խմելու ջրի (Ստեփանավանի) ցանցի ընդլայնման աշխատանքներ:
10. և այլն:

## 1.6.Համայնքի ֆինանսական իրավիճակի վերլուծություն, գնահատական և կանխատեսում

**Համայնքի 2022թ. բյուջեի մուտքի ցուցանիշները և 2023թ. բյուջեի մուտքերի կանխատեսումները**

/հազար ՀՀ դրամ/

*Աղյուսակ 5.*

| Հ/հ | Մուտքերի անվանումը | 2022թ. փաստ. | 2023թ. նախատ. | 2024թ. նախատ. | 2025թ. կանխ.. | 2026թ. կանխ.. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 6 |
| | **ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ՝ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*** | **1727261.0.0** | 1804070.1 | | | |
| I. | **ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (1+2+3)*** | **1717261.0** | 1793070.1 | | | |
| 1. | **ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ** | **270445.4** | 282200.0 | | | |
| 1.1 | **Գույքային հարկեր անշարժ գույքից** | **62400.0** | 62400.0 | | | |
| | Գույքահարկ շենքերի և շինությունների համար | **2600.0** | 2600.0 | | | |
| | Հողի հարկ | **59800.0** | 59800.0 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **1.2** | **Գույքային հարկեր այլ գույքից** | **194300.0** | 205000.0 | | | |
| | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | **194300.0** | 205000.0 | | | |
| **1.3** | **Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ** | **8450.1** | 9500.0 | | | |
| | Տեղական տուրքեր | 8450.1 | 9500.0 | | | |
| **1.4** | **Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ** | **5295.3** | 5300.0 | | | |
| | Պետական տուրքեր | **5295.3** | 5300.0 | | | |
| **1.5** | **Այլ հարկային եկամուտներ** | 0 | 0 | | | |
| | Այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումներ | 0 | 0 | | | |
| | Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ | 0 | 0 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ | 1336210.6 | 1396065.1 | | | |
| 2.1 | **Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | **0** | | | | |
| 2.2 | **Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ** | **0** | | | | |
| 2.3 | **Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | **886210.6** | 870000.0 | | | |
| ա) | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | **861776.5** | 870000.0 | | | |
| բ) | Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ | **15065.1** | 15065.1 | | | |
| գ) | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | **9369.0** | 11000.0 | | | |
| դ) | ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | **0** | | | | |
| 2.4 | **Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ** | **450000.0** | **500000.0** | | | |
| ա) | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | **450000.0** | **500000.0** | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| բ) | ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ | **0** | | | | |
| **3.** | **ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ*** | **110605.0** | 114805.0 | | | |
| **3.1** | **Տոկոսներ** | | | | | |
| **3.2** | **Շահաբաժիններ** | | | | | |
| **3.3** | **Գույքի վարձակալությունից եկամուտներ** | **37800.0** | 42000.0 | | | |
| | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | **8300.0** | 9500.0 | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | **14500.00** | 15700.0 | | | |
| | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | **0** | 0 | | | |
| | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | **15000.0** | 16800.0 | | | |
| **3.4** | **Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների** | **1990.0** | 1990.0 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **մատակարարումից և ծառայությունների մատուցումից,** այդ թվում | | | | | |
| | Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | **1990.0** | 1990.0 | | | |
| 3.5 | **Վարչական գանձումներ** | **65815.0** | 68815.0 | | | |
| | Տեղական վճարներ | **26765.0** | 28315.0 | | | |
| | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | **3500.0** | 3500.0 | | | |
| | Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարներ | **35550.0** | 37000.0 | | | |
| 3.6 | **Մուտքեր տույժերից, տուգանքներից** | **1500.0** | **2000.0** | | | |
| | Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի | **1500.0** | **2000.0** | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կողմից պատասխանատվությ ան միջոցների կիրառումից եկամուտներ | | | | | |
| | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորություններ ի չկատարման դիմաց գանձվող տույժերից | **0** | **0** | | | |
| **3.7** | **Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | **0** | 0 | | | |
| **3.8** | **Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ** | **0** | 0 | | | |
| **3.9** | **Այլ եկամուտներ*** | **3500.0** | 4000.0 | | | |
| | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | **0** | 0 | | | |
| | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | **0** | 0 | | | |
| | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | **3500.0** | 4000.0 | | | |
| **II.** | **ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)** | **10000.0** | 11000.0 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Հիմնական միջոցների իրացումից մուտքեր** | 0 | 0 | | | |
| | Անշարժ գույքի իրացումից մուտքեր | 0 | 0 | | | |
| | Շարժական գույքի իրացումից մուտքեր | 00 | 0 | | | |
| | Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր | 0 | 0 | | | |
| 2. | **Պաշարների իրացումից մուտքեր** | 0 | 0 | | | |
| 3. | **Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր** | 0 | 0 | | | |
| 4. | **Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր** | 10000.0 | 11000.0 | | | |
| | Հողի իրացումից մուտքեր | 10000.0 | 11000.0 | | | |
| | Ոչ նյութական չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր | 0 | 0 | | | |
| III. | **ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)** | 00 | 0 | | | |
| Ա. | **ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)** | 0 | 0 | | | |
| 1. | **ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ** | 0 | 0 | | | |
| 1.1 | **Արժեթղթեր** | 0 | 0 | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | 0 | 0 | | | |
| | -հիմնական գումարի մարում | 0 | 0 | | | |
| 1.2 | **Վարկեր** | 0 | 0 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | -վարկերի ստացում | 0 | 0 | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | 0 | 0 | | | |
| 1.3 | **Փոխատվություններ** | 0 | 0 | | | |
| | -բյուջետային փոխատվությունների ստացում | 0 | 0 | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | 0 | 0 | | | |
| 2. | **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ** | 0 | 0 | | | |
| 2.1 | **Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն** | 0 | 0 | | | |
| | -համայնքային սեփականության բաժնետոմսերի և կապիտալում համայնքի մասնակցության իրացումից մուտքեր | 0 | 0 | | | |
| | -իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), այդ թվում` անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի | 0 | 0 | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | բյուջե մասհանումից մուտքեր | | | | | |
| | -բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն ձեռքբերում | 0 | 0 | | | |
| 2.2 | **Փոխատվություններ** | 0 | 0 | | | |
| | -նախկինում տրամադրված փոխատվությունների դիմաց ստացվող մարումներից մուտքեր | 0 | 0 | | | |
| | -փոխատվությունների տրամադրում | 0 | 0 | | | |
| 2.3 | **Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը** | 179819.0 | | | | |
| 2.4 | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս** | 0 | 0 | | | |
| 2.5 | **Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս** | 0 | 0 | | | |
| 2.6 | **Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում** | 444974.5 | | | | |
| | **որից` ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի** | 179819.0 | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը** | | | | | |
| **Բ.** | **ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ** | 0 | 0 | | | |
| **1.** | **ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ** | 0 | 0 | | | |
| **1.1** | **Արժեթղթեր** | 0 | 0 | | | |
| | -թողարկումից և տեղաբաշխումից մուտքեր | 0 | 0 | | | |
| | -հիմնական գումարի մարում | 0 | 0 | | | |
| **1.2** | **Վարկեր** | 0 | 0 | | | |
| | -վարկերի ստացում | 0 | 0 | | | |
| | -ստացված վարկերի հիմնական գումարի մարում | 0 | 0. | | | |
| **1.3** | **Փոխատվություններ** | 0 | 0 | | | |
| | -փոխատվությունների ստացում | 0 | 0 | | | |
| | -ստացված փոխատվությունների գումարի մարում | 0 | 0 | | | |

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

## 1.7 Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակ, համայնքային ենթակայության հիմնարկներ

*Աղյուսակ 5. Այրում*

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Այրումի մանկապարտեզի շենք | լավ | չկա | Մանկապարտեզի մեկ հարկաբաժնում , որտող նախկինում տեղակայված էր համայնքապետարանը և երաժշտական դպրոցը , ունի ներքին հարդարման աշխատանքերի կարիք |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Բժշկական ամբուլատորիա | Վթարային 4-րդ կարգ | Փոխարինում/նորի կառուցում/ | |
| 3 | Այրումի մշակույթի կենտրոն | գերազանց | 0 | Հիմնանորոգվել է 2020թ., ունի գույքային համալրման կարիք |
| 4 | Համայնքային կենտրոնի և երաժշտական դպրոցի շենք | գերազանց | 0 | - |
| 5 | Հանրակացարան թիվ 1 | վատ | 0 | Ունի հիմնանորոգման կարիք |

## *Աղյուսակ 6. Արծիս*

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Ակումբ | վատ | Վերակառուցման ենթակա | |
| 2 | Բաղնիքի շենք | վատ | Վերակառուցման ենթակա | |
| 3 | Վարչական շենք | | Վերանորոգման ենթակա | |
| 4 | Հացահատիկի պահեստ | վատ | Վերակառուցման ենթակա | |
| 5 | Տրանսֆորմատ.ենթակայան | Ոչ բարվոք | - | |
| 6 | Գրասենյակ հին | Ոչ բարվոք | հիմնանորոգում | |
| 7 | Նախադպրոցական հիմնարկ | լավ | Մասնակի հիմնանորոգում | |
| 8 | Հանդիսությունների սրահ | բարվոք | Վերանորոգման ենթակա | |

## *Աղյուսակ 7. Բագրատաշեն*

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղապետարանի շենք | լավ | Ներքին հարդարում | |
| 2 | Երաժշտական դպրոցի շենք | վատ | Կապիտալ նորոգման | |
| 3 | Մանկապարտեզ | վատ | փոխարինման | |
| 4 | Մշակույթի տուն | վատ | Կապիտալ նորոգում | |
| 5 | | | | |

## *Աղյուսակ 8. Բաղանիս*

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքապետարան, մանկապարտեզ | բարվոք | նորոգման | |
| 2 | Ակում խաղասենյակ | վթարային | փոխարինման | |
| 3 | Բուժկետ | բարվոք | նորոգման | |
| 4 | Կիսակառույց շենքեր | կիսակառույց | | |
| 5 | Վարսավիրանոց | վթարային | փոխարինման | |
| 6 | Առեվտրի սրահ | վթարային | նորոգման | |

## *Աղյուսակ 9. Բարեկամավան*

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Բարեկամավան | վատ | Կա փոխարինման կարիք | |

## Աղյուսակ 10. Բերդավան

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոց | լավ | Ունի մասնակի նորոգման կարիք | |
| 2 | Բուժամբուլատորիա | Լավ | Վերանորոգված է | |
| 3 | Մշակույթի տուն | Լավ | Վերանորոգված է, ունի ջեռուցման համակարգի տեղադրման կարիք | |
| 4 | Համայնքային կենտրոն | բավարար | Ունի մասնակի նորոգման կարիք | |
| 5 | Մանկապարտեզ | Լավ | Վերանորոգված է | |

## Աղյուսակ 11. Դեղձավան

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Վարչական շենք | լավ | | |

## Աղյուսակ 12. Դովեղ

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Դովեղի վարչական նստավայր | բավարար | Ընթացքի մեջ է | |
| 2 | պահեստ | բավարար | Նորոգման կարիգ | |
| 3 | Համայնքային կենտրոն | բավարար | | |

### *Աղյուսակ 13. Դերեղավան*

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոց | բավարար | Ունի մասնակի նորոգման կարիք | |
| 2 | Բուժկետ | բավարար | Ունի վերանորոգման կարիք | |
| 3 | Մշակույթի տուն | բավարար | Ունի վերանորոգման կարիք | |
| 4 | Համայնքային կենտրոն | բավարար | Ունի վերանորոգման կարիք | |
| 5 | Մանկապարտեզ | Վատ | Չի գործում | |

### *Աղյուսակ 14. Զորական*

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Գրասենյակային շենք | միջին | Վերանորոգման կարիք | |
| 2 | Փոստի շենք | վատ | Վերանորոգման կարիք | |
| 3 | Նախկին մանկապարտեզի շենք | Փլուզման ենթակա | Վերակառուցման կարիք | |
| 4 | Վարչական գրասենյակի շենք | վատ | Վերանորոգման կարիք | |
| 5 | Հանդիսությունների սրահ | միջին | Վերանորոգման կարիք | |

### Աղյուսակ 15. Լճկաձոր

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոց | լավ | Ունի ընդլայնման, նոր մասնաշենքի կառուցման կարիք | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Բուժկետ | վատ | Ունի կապիտալ վերանորոգման կարիք | |
| 3 | Վարչական նստավայր | բավարար | Ունի վերանորոգման կարիք | |

## Աղյուսակ 16. Կոթի

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Կոթիի գյուղապետարան | բավարար | Ունի նորոգման կարիք | |
| 2 | Կոթիի մսուր-մանկապարտեզ | լավ | Կոսմետիկ նորոգում | |
| 3 | Կոթիի մշակույթի կենտրոն | վատ | Ունի կապիտալ նորոգման կարիք | |
| 4 | Կոթիի հանդիսությունների սրահ | լավ | Ունի կից խոհանոցի կառուցման կարիք | |
| 5 | Կոթիի փոստ | վատ | Ունի նորոգման կարիք | |

## Աղյուսակ 17. Կողբ

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Համայնքապետարանի շենք | լավ | - | - |
| 2 | Մանկական երաժշտական դպրոց | բավարար | հիմնական նորոգման կարիք | - |
| 3 | Մշակույթի կենտրոնի շենք | բավարար | նորոգման կարիք | - |
| 4 | Թիվ 1 մանկապարտեզի շենք | բավարար | հիմնական նորոգման կարիք | - |
| 5 | Թիվ 2 մանկապարտեզի շենք | լավ | - | - |
| 6 | Բժշկական ամբուլատորիա | բավարար | հիմնական նորոգման կարիք | - |

## Աղյուսակ 18. Հաղթանակ

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոց | լավ | Մասնակի նորոգման կարիք | |
| 2 | Բուժկետ | բավարար | նորոգման կարիք կա | |
| 3 | Մշակույթի տուն | բավարար | նորոգման կարիք կա | |
| 4 | Համայնքային կենտրոն | բավարար | նորոգման կարիք կա | |
| 5 | Մանկապարտեզ | բավարար | նորոգման կարիք կա | |
| 6 | Վարչական նստավայր | բավարար | նորոգման կարիք կա | |

## Աղյուսակ 19. Նոյեմբերյան

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Թիվ 2 դպրոց | Լավ | Ունի մասնակի նորոգման և ընդլայնման կարիք | |
| 2 | Ավագ դպրոց | Շատ լավ | նորոգման կարիք չկա | |
| 3 | Բժշկական կենտրոն | լավ | Ունի բակային բարեկարգման կարիք | |
| 4 | Մշակույթի տուն | լավ | Ունի վերանորոգման կարիք | |
| 5 | Համայնքային կենտրոն | լավ | Ունի վերանորոգման կարիք | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Երաժշտական դպրոց | բավարար | Ունի վերանորոգման կարիք | |
| 7 | Մարզադպրոց | լավ | Ունի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի տեղադրման կարիք | |
| 8 | Թիվ 1 մանկապարտեզ | բավարար | Ունի վերանորոգման կարիք | |
| 9 | Թիվ 2 մանկապարտեզ | բավարար | Ունի վերանորոգման կարիք | |
| 10 | Համայնքապետարանի շենք | լավ | Ունի մասնակի վերանորոգման կարիք | |

Աղյուսակ 20. Ոսկեպար

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Ակումբի շենք | բավարար | նորոգման կարիք կա | |
| 2 | Խորհրդային տնտ. գրասենյակ | բավարար | նորոգման կարիք չկա | |
| 3 | Ոսկեպարի վարչական շենք | լավ | նորոգման կարիք չկա | |
| 4 | Հանդիսությունների սրահ | լավ | նորոգման կարիք չկա | |
| 5 | Ավտոսպասասրահ | բավարար | նորոգման կարիք կա | |

### Աղյուսակ 21. Ոսկեան

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Գյուղապետարանի շենք | Ողբալի | Որը պատահի | |
| 2 | Մշակույթի տուն | լավ | կոսմետիկ նորոգում | |

### Աղյուսակ 22. Պտղավան

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Բնակելի շենք | | | |
| 2 | Բնակելի շենք | | | |
| 3 | Բուժանյութերի պահեստ | | | |
| 4 | Գրադարանի  շենք | | | |
| 5 | մանկապարտեզ | | | |

### Աղյուսակ 23. Ջուջևան

| № | անվանումը | Ընդհանուր վիճակի գնահատականը | Նորոգման/ փոխարինման կարիք | ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Նախկին մանկապարտեզի շենք | վատ | փոխարինման | |
| 2 | Վարչական շենք | բավարար | նորոգման | |

## 1.8 Համայնքում առկա իրավիճակն՝ ըստ ոլորտների

### 1. Բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

Բնակիչների մասնակցությունը ՏԻ գործընթացին պասիվ է, բնակիչները հիմնականում ՏԻՄ-ի հետ առնչվում են իրենց հուզող անհատական խնդիրների լուծման հարցերով: Անհրաժեշտություն կա բարելավել վերջիններիս իրազեկվածության աստիճանը ՏԻ վերաբերյալ, ինչպես նաև տալ նրանց որոշակի մոտիվացիա՝ խթանելով առավել ակտիվ հասարակական վարքը:

### 2. Կրթություն

Նոյեմբերյան համայնքի նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը իրականացվում է համայնքային ենթակայության մասնագիտացված հիմնարկների գործունեության միջոցով: Այս համատեքստում առկա հիմնախնդիրները վերաբերում են առավելապես կրթական կառույցների շենքային պայմանների բարելավմանն ու գույքային բազայի թարմացմանը:

Անհրաժեշտություն կա համայնքում կազմակերպել նաև ոչ ֆորմալ կրթական ծրագրեր:

### 3. Մշակույթ

Համայնքում գործում են մշակույթի, գեղագիտական դաստիարակության և գեղարվեստի դպրոցներ, գրադարաններ, թանգարաններ, ինչպես նաև՝ Նոյեմբերյանի Ինտելեկտուալ Կրթության Ակումբ /ՆԻԿԱ/:

Որոշ բնակավայրերում (օրինակ՝ Կողբ, Բերդավան և Նոյեմբերյան) մշակութային կյանքն առավել ակտիվ է, պարբերաբար կազմակերպվում են տարատեսակ միջոցառումներ: Սակայն, ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է խթանել մշակութային կյանքի ակտիվացումը՝ ինչպես մշակութային ենթակառուցվածքների բարելավման, այնպես էլ միջոցառումների կազմակերպման միջոցով:

### 4. Սպորտ

Համայնքում առկա են սպորտով զբաղվելու որոշակի ենթակառուցվածքային հնարավորություններ, սակայն անհրաժեշտություն կա ընդլայնելու մարզական հնարավորությունները, մասնավորապես՝ ֆուտբոլային խաղադաշտերի բարեկարգման, մարզական ակումբների հիմնման, բացօթյա մարզահրապարակների կառուցման և ոլորտային միջոցառումների կազմակերպման միջոցով:

### 5. Առողջապահություն

Համայնքում առողջապահական ծառայություններ մատուցող կառույցները գտնվում են հիմնականում բավարար, քաղաքային և կամ մեծ բնակավայրերում առավել բարվոք վիճակում:

Անհրաժեշտություն կա համայնքում հիմնել **վերականգնողական կենտրոն,** որի բացակայության պատճառով տեղի բնակիչները ստիպված են լինում նմանատիպ ծառայությունների ստացման համար հասնել մայրաքաղաք և ավելի մեծ ծախսեր կատարել:

Կարիք կա նաև համայնքում պարբերաբար կազմակերպել հիվանդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես՝ մայրաքաղաքից համապատասխան մասնագետների՝ Նոյեմբերյան հրավիրելու և տեղի բնակիչների համար բուժզննման հնարավորություններ ընձեռելու եղանակով:

### 6. Բնարականային տնտեսություն, բնակելի ֆոնդի կառավարում

Համայնքում կարիք կա իրականացնել բազմաբնակարան շենքերի բարեկարգման աշխատանքներ, ինչպես նաև խթանել բնակարանաշինությունը:

Անհրաժեշտություն կա գնահատել նաև բնակֆոնդի ռիսկայնությունը՝ սեյսմիկ անվտանգության տեսանկյունից և, ըստ անհրաժեշտության, իրականացնել կանխարգելման աշխատանքներ:

### 7. Հողային ռեսուրսներ և դրանց կառավարում

Համայնքն ունի զարգացման համար անհրաժեշտ հողային ռեսուրսներ, սակայն խնդրահարույց է ոռոգման համակարգը, որի պատճառով զգալի հողեր չեն ջրվում և, հետևաբար, չեն մշակվում:

Առկա են խնդիրներ նաև արոտավայրերի ծավալների, դրանց արդյունավետ կառավարման տեսանկյունից:

### 8. Տրանսպորտ, ճանապարհային ենթակառուցվածքներ

Համայնքում արդեն իսկ ներդրվել է ներքին փոխադրման համար նախատեսված տրանսպորտային համակարգ, որը, դեռևս, փորձնական փուլում է:

Անհրաժեշտություն կա ուսումնասիրել մշակված ժամանակացույցը և բարելավել այն՝ ըստ բնակիչների համար հարմարավետության:

Համայնքի ներքին ճանապարհները, բնակավայրերի մեծամասնության պարագայում, կարիք ունի նորոգման/հիմնանորոգման: Որոշ դեպքերում առավել արդյունավետ կարող են լինել ասֆալտապատման փոխարեն տուֆապատման աշխատանքները:

## 9. Արտաքին լուսավորություն

Համայնքն ունի արտաքին լուսավորության բավարար համակարգեր, բնակավայրերի մեծ մասում տեղադրված են ժամանակակից էներգախնայող համակարգեր:

Ներկայում նախատեսվում է իրականացնել միջպետական ճանապարհի երկայնքով արտաքին լուսավորության ցանցի կառուցում/ավելացում, որը կապահովի բավարար լուսավորություն ողջ բնակավայրերի միջպետական ճանապարհային հատվածներում:

## 10. Համայնքի բնակիչների սոցիալական պաշտպանություն

Համայնքում անհրաժեշտություն կա իրականացնել սոցիալական պաշտպանության բազմաբնույթ սոցիալական ծառայությունների ներդրում, որի ուղղությամբ այս պահին մշակվել և 5-ամյա ծրագրին կից ներկայացված են 4 ուղղություններով ծրագրային նախագծեր: Դրանից բացի, ներկայում իրականացվում է կարիքների գնահատում՝ այս ուղղությամբ ծառայությունների ավելի համապարփակ, բնակիչների կարիքներին ավելի ճշգրիտ արձագանքող համակարգի ներդրման նպատակով:

## 11. Համայնքի հանգստի գոտիներ, զբոսայգիներ, խաղահրապարակներ

Համայնքի հանգստի գոտիներն ու զբոսայգիները գտնվում են ոչ այնքան բարվոք վիճակում:

Առկա զբոսայգիներն ունեն բարենորոգման կարիք, որի համատեքստում Նոյեմբերյանի զբոսայգու բարեկարգման ուղղությամբ ներկայում իրականացվում են նախագծային աշխատանքներ:

Համայնքի հանգստի գոտիները՝ աղբյուրները, ունեն մաքրման, այդտեղ աղբամանների տեղադրման, որոշ դեպքերում՝ խմելու ջրագծերի բարելավման կարիք, որի ուղղությամբ ներկայում իրականացվում են կարիքների գնահատման աշխատանքներ:

## 12. Համայնքի գործարար միջավայրն ու ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունները (առևտուր, ծառայություններ և այլն)

Խնդրահարույց է բնակիչների շրջանում զբաղվածության ցածր մակարդակը, որը հանգեցնում է սոցիալական ցածր բարեկեցության: Անհրաժեշտ է իրականացնել բնակիչների ձեռնարկատիրական կարողությունների, գերփոքր և փոքր բիզնեսի հիմնման/ընդլայնման ուղղությամբ զարգացման ծրագրեր, ինչպես նաև հիմնել կարիերայի կենտրոն, որն անմիջական աջակցություն և խորհրդատվություն կտրամադրի հավանական շահառուներին:

## 13. Աղետների ռիսկերի կառավարում, քաղաքացիական պաշտպանություն

Անհրաժեշտություն կա վերանայել/գնահատել աղետի ռիսկերի կառավարման ենթակառուցվածքների առկա վիճակը, իրականացնել դրանց բարեկարգման և ամրացման աշխատանքներ, ստուգել քաղաքացիական պաշտպանության համակարգերի սարքինությունը:
Մյուս կողմից, անհրաժեշտ է բարձրացնել տեղի բնակիչների իրազեկվածության աստիճանը, ինչպես նաև վերջիններիս համար կազմակերպել առաջին բուժօգնության և քաղ. պաշտպանության ուսուցման ծրագրեր:

## 1.9 Համայնքի ուժեղ և թույլ կողմեր, զարգացման հնարավորություններ և ռիսկեր

*Աղյուսակ 24. Համայնքի ուժեղ և թույլ կողմերը*

| **Համայնքի ուժեղ կողմերը** | **Համայնքի թույլ կողմերը** |
|---|---|
| ▪ Համայնքում բնակվում է ավանդապաշտ, բարի, հյուրասեր և աշխատասեր ժողովուրդ:<br>▪ Համայնքն ունի ինտելեկտուալ զարգացած մարդկային ռեսուրս, համապատասխան կրթություն ունեցող, գործարար հատկություններով օժտված ակտիվ երիտասարդություն:<br>▪ Համայնքում առկա է տնայնագործական մակարդակով ավանդական արհեստագործական իրերի և բնամթերքների արտադրություն:<br>▪ Համայնքում գործում են հանրապետության երեք խոշոր առևտրային բանկերի մասնաճյուղեր և վարկավորման գործառույթներ իրականացնող տարբեր կազմակերպություններ:<br>▪ Համայնքն ունի հեռուստաաշտարակ, տեղական հեռուստաստուդիա և հասարակական կազմակերպությունների զարգացած ցանց: | ▪ Համայնքի բնակավայրերն առանձնանում են սոցիալ-տնտեսական խնդիրների քանակական ու որակական չափորոշիչների առումով:<br>▪ Գործազրկության բարձր մակարդակ:<br>▪ Շատ ցածր է համայնքում գործող արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքների համայնքից դուրս արտահանման մակարդակը<br>▪ Գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրման մակարդակը ցածր է, ձեռքի աշխատանքի կիրառման տեսակարար կշիռը՝ բարձր:<br>▪ Գրեթե գոյություն չունի գյուղատնտեսական կոոպերացիան, շատ ցածր են տնտեսությունների խոշորացման տեմպերը<br>▪ Ոռոգելի հողերի գերակշռող մասը չի ոռոգվում ոռոգման համակարգի բացակայության և անպիտանիության պատճառով: .Համայնքը չունի մեծածախ գյուղատնտեսական շուկա |

| | |
|---|---|
| ▪ Համայնքն ունի առևտրի կազմակերպման զարգացած ցանց, սպասարկման որակը գտնվում է պատշաճ մակարդակի վրա:<br>▪ Համայնքում գործում են մի քանի տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ:<br>▪ Աշխարհագրական նպաստավոր դիրքը. Վրաստանին սահմանակից լինելը (Թբիլիսիից 70 կմ հեռավորություն), միջպետական ճանապարհի վրա գտնվելը, Այրում երկաթուղային կայարանին մոտ գտնվելը (17 կմ)<br>▪ Ամբողջական գազաֆիկացված,<br>▪ Հեռախոսակապի առկայություն,<br>▪ Կենտրոնական փողոցներն ապահովված են փողոցային լուսավորությամբ,<br>▪ Առկա է առևտրի և կենցաղային սպասարկման զարգացած համակարգ,<br>▪ Վարելահողերի, արոտավայրերի և խոտհարքների զգալի պաշարները,<br>▪ Պատմամշակութային հուշարձանների առկայություն, նոր եկեղեցիներ,<br>▪ Զարգացած արհեստներ, մասնավորապես փայտագործությունը, կարպետագործությունը, քարագործությունը,<br>▪ Զարգացած սպորտը և արվեստը,<br>▪ Համայնքային ենթակառուցվածքների բավարար քանակ և վիճակ,<br>▪ Հողային և անտառային բավարար ռեսուրսներ, բարենպաստ կլիմայական պայմաններ,<br>▪ Խմելու ջրի բավարար պաշարների առկայություն,<br>▪ Մարդկային ռեսուրսներով ապահովվածություն և կրթական բարձր մակարդակ,<br>▪ Հարկային արտոնություններ,<br>▪ Համայնքի համախմբվածություն,<br>▪ Համագործակցություն զորամասի հետ, | ▪ Համայնքում դեռևս չկա գյուղատնտեսական զարգացած ռեսուրս կենտրոն:<br>▪ Գրեթե բացակայում են Զբոսաշրջության առաջնային զարգացման համար անհրաժեշտ ենթակառույցները:<br>▪ Դեռևս անբավարար է համայնքային ենթակառուցվածքների վիճակը<br>▪ Խմելու ջրի որակը մեծամասամբ չի համապատասխանում սանիտարահիգիենիկ նորմատիվներին<br>▪ Համայնքի գյուղական բնակավայրերում բացակայում են սահմանված նորմերով սարքավորված աղբանոցները:<br>▪ Սահմանամերձություն<br>▪ Երկրորդ գոտու հողերը գտնվում են 8 – 40 կմ/նախալեռնային և լեռնային գոտիներ/ հեռավորության վրա, որի պատճառով չափազանց ցածր է դրանց օգտագործման արդյունավետությունը:<br>▪ Համայնքի բնակչության շուրջ 40 տոկոսը կայուն եկամտի աղբյուրներ չունի,<br>▪ Ներհամայնքային ճանապարհների ոչ բարվոք վիճակ, որոնք հեղեղատարների և ջրահեռացման համակարգերի բացակայության պատճառով արագ շարքից դուրս են գալիս:<br>▪ Խմելու ջրի ներհամայնքային ցանցերի քայքայվածության բարձր աստիճան<br>▪ Խմելու և կենցաղային ջրով բնակչության թերի ապահովում:<br>▪ Շուկաներից հեռու լինելը<br>▪ Մարքետինգային կարողությունների, ունակությունների պակաս<br>▪ Երիտասարդ ընտանիքները ապահովված չեն բնակարանային պայմաններով:<br>▪ Բազմաբնակարան բնակելի շենքերի մեծ մասը վերանորոգման կարիք ունեն:<br>▪ Համայնքը չունի ինտեսիվ գյուղատնտեսական հիմնված այգիներ: |

| | |
|---|---|
| ▪ Համայնքի զարգացման ծրագրի առկայություն:<br>▪ Բազմաթիվ սոցիալապես անապահով ընտանիքներ: | ▪ Համայնքը չունի հեռանկարային զարգացման պլան:<br>▪ Համայնքը սոցիալապես անապահով և անվճարունակ է.<br>▪ Երիտասարդների արտագաղթի վտանգ և համայնքի ծերացման վտանգ.<br>▪ Բնակչության անվճարականություն<br>▪ Սոցիալական վիճակի անկում:<br>▪ Ճանապահների անբարենպաստ վիճակ<br>▪ Ոռոգման ցանցի ոչ բավարար վիճակ |

*Աղյուսակ 25. Հնարավորություններ և սպառնալիքներ*

| **Համայնքի հնարավորությունները** | **Համայնքի սպառնալիքները** |
|---|---|
| **Աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները.**<br>▪ Նորաստեղծ Նոյեմբերյան համայնքը տեղակայված է ՀՀ հյուսիս-արևելյան մասի գեղատեսիլ լեռնաանտառային գոտում: Համայնքի վարչական տարածքի գրեթե կեսը պատված է խիտ անտառներով: Բաց հողատարածքների լոկալ տեղադրվածությունը ուրույն գեղեցկություն է հաղորդում ընդհանուր լանդշաֆտին: Ծովի մակերևույթից բարձրությունների զգալի տարբերությունները առաջացնում են կլիմայական գոտիների բազմազանություն՝ չոր դաշտայինից մինչև ալպիական մարգագետիններ: Ընդհանուր առմամբ կլիման մեղմ է և զով: Քաղցրահամ ջրի բնական աղբյուրների առատություն է: Դրանց գերակշռող մասը գեղեցիկ և հարմարավետ կառուցապատված են և հանդես են գալիս որպես հուշաղբյուրներ: | ▪ **.Անվտանգություն**.<br>Համայնքը սահմանամերձ է: Ադրբեջանի հետ սահմանի երկարություն 122 կմ է: Համայնքի բոլոր բնակավայրերը, բացի Ջուջևան գյուղը, ունեն սահմանամերձի կարգավիճակ: Այդ բնակավայրերը մշտապես գտնվում են հակառակորդի կողմից գնդակոծման, իսկ Նոյեմբերյան քաղաքը՝ հրետակոծման վտանգի տակ:<br>▪ Համայնքը Երևանի հետ կապող ավտոճանապարհը մի զգալի հատվածում ուղղակիորեն անցնում է հակառակորդի հեռահար, իսկ առանձին տեղերում՝ սովորական կրակային միջոցների ուղիղ նշանառության տակով:<br>▪ Համայնքը հեռու է մայրաքաղաքից մոտ 190կմ:<br>▪ Համայնքում բացակայում են խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները և կոմունիկացիոն հանգույցները: Չկա երկաթուղի և օդանավակայան: |

| | |
|---|---|
| ▪ Տարածքը հարուստ է բնակերտ տեսարժան վայրերով և պատմամշակութային հուշարձաններով:<br>▪ .Անտառները հարուստ են արժեքավոր հատապտուղներով և բազմատեսակ բնափայտով:<br><br>**Ճանապարհներ և հաղորդակցություն.**<br><br>▪ Համայնքի միջով է անցնում հանրապետական նշանակության M16 Երևան-Թբիլիսի ավտոճանապարհը: Համայնքի վեց բնակավայրեր /Ոսկեպար,Ոսկեվան, Բաղանիս, Ջուջևան, Նոյեմբերյան, Բերդավան/իրենց վարչական տարածքներով անմիջականորեն առնչվում են այդ ճանապարհին:<br>▪ Համայնքի բնակավայրերը տեղակայված են համայնքի վարչական տարածքի համեմատաբար ցածրադիր հյուսիս-արևմտյան հատվածում: Նոյեմբերյան քաղաքից մինչև ամենահեռավոր Բարեկամավան գյուղը 33 կմ է: Բնակավայրերի միջև ճանապարհային հաղորդակցությունը դյուրինացված է հիմնականում M16 ավտոճանապարհի առկայությամբ:<br>▪ Համայնքը մոտ է Հայաստանի հյուսիս-արևելյան դարպասներին: Նոյեմբերյան քաղաքից մինչև Բագրատաշենի մաքսակետը 27 կմ է:<br>▪ Նոյեմբերյան քաղաքի հեռավորությունը մոտակա <<Այրում>> երկաթուղային կայարանից 25 կմ է:<br>▪ Համայնքի բոլոր բնակավայրերը, բացի Ջուջևանը, օգտվում են պետության կողմից սահմանած սահմանամերձի կարգավիճակից բխող սոցիալական և տնտեսական արտոնություններից: | ▪ Գյուղատնտեսական նշանակության հողերի մի զգալի մասը չի մշակվում սահմանին մոտ լինելու պատճառով:<br>▪ Համայնքի հիմնական արոտավայրերը հեռու են բնակավայրերից 20-50կմ:<br>▪ Համայնքի տնտեսությունը և բնակչությունը իրենց վրա են կրում հանրապետության տնտեսական անկման բոլոր հետևանքները՝ սղաճ, գործազրկության աճ, աղքատության մեծացում, արտագաղթ, պետական կառավարման և տնտեսավարման արդյունավետության նկատմամբ անվստահության խորացում և այլն:<br>▪ Պատերազմի վերսկսումը<br>▪ Արտագաղթող ընտանիքների թվի աճը<br>▪ Կենցաղային /ոռոգման ջրով համայնքի մեծամասնության անապահովվածությունը,<br>▪ Շրջակա միջավայրի աղտոտումը կենցաղային աղբով,<br>▪ Բնական աղետներ (երկրաշարժ, կարկուտ, երաշտ, հեղեղումներ և այլն)<br>▪ Սխալ տնտեսական քաղաքականությունը<br>▪ Մենաշնորհային տնտեսությունը և կոռուպցիան<br>▪ Օրենսդրական դաշտի անկատարությունը<br>▪ Գյուղմթերքների և հումքի գների իջեցումը |

| | |
|---|---|
| ▪ Էկո-, ագրո- և մշակութային տուրիզմի զարգացումը /օգտագործել բնության գեղեցկությունը, անտառներով հարուստ լինելու հանգամանքը, ինչպես նաև համայնքի աշխարհագրական դիրքը/:<br>▪ Դաշտավարության զարգացում, մասնավորապես ոչ ավանդական մշակաբույսերի /սոյա/<br>▪ Խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության և մեղվաբուծության զարգացման մեծ ներուժ<br>▪ Որակավորված աշխատուժի առկայությունը, ԲՈՒՀ-ական և միջն. մասն. Կրթությամբ մասնագետների մեծ թիվը, համայնքում գործող տարբեր խմբերի և կազմակերպությունների առկայությունը:<br>▪ Փոքր և միջին բիզնեսի զարգացում<br>▪ Նոր արտոնություններ<br>▪ Տարբեր ներդրումներ (դոնորներ, ներքին և արտաքին սփյուռք)<br>▪ Միջհամայնքային համագործակցություն<br>▪ Գյուղմթերքների և հումքի գների բարձրացում<br>▪ Վարկային ռեսուրսների ներգրավում<br>▪ Կաթի, մսի վերամշակման արտադրամասերի, սպանդանոցների կառուցում<br>▪ Մրգերի պահպանման համար սառնարանային տնտեսության, ինչպես նաև չորանոցների ստեղծում: | |

# 2 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

## 2.1 Համայնքի զարգացման տեսլական

Նոյեմբերյանն անվտանգ, պահպանված շրջակա միջավայրով, կայուն զարգացող համայնք է՝ հարմարավետ տեղի բնակիչների, գրավիչ՝ զբոսաշրջիկների և հեռանկարային՝ ներդրողների համար: Համայնքում լուծված են բնակիչների բարեկեցիկ կյանքի ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքային հիմնախնդիրները, ձևավորված է կանաչ գյուղատնտեսության, նորարարական զբոսաշրջության, սոցիալական բարձր պատասխանատվությամբ բիզնեսի և թվային ժամանակակից տեխնոլոգիաների կայուն զարգացման համար անհրաժեշտ միջավայր: Համայնքի բնակիչներն ունեն տեղական ինքնակառավարման գործընթացին լիարժեք մասնակցության, սեփական կարողությունների իրացման, ֆորմալ և ոչ ֆորմալ որակյալ կրթության ստացման, մշակութային և մարզական պահանջմունքների բավարարման, հանգստի և ժամանցի կազմակերպման, առողջ ապրելակերպի պահպանման, զբաղվածության և ձեռնարկատիրությամբ զբաղվելու հնարավորությունները:

## 2.2 Համայնքի զարգացման ռազմավարական ուղղությունները

Նոյեմբերյան համայնքի զարգացման ծրագիրը հիմնված է հետևյալ ռազմավարական ուղղությունների վրա.

1. Համայնքում ծանր մետաղական հանքարդյունաբերության բացառում, շրջակա միջավայրի անաղարտ պահպանման առաջնայնություն
2. Համայնքում նորարարական տեխնոլոգիաների ներդրմամբ գյուղատնտեսության զարգացում
3. Համայնքում զբոսաշրջության զարգացում
4. Համայնքում ժամանակակակից թվային տեխնոլոգիաների ոլորտում կրթական և աշխատանքային կառույցների ձևավորում, ծրագրերի իրականացում
5. Համայնքում գործարար միջավայրի զարգացում, ներդրումների խթանում
6. Սոցիալապես խոցելի բնակիչների բարեկեցության բարձրացում
7. Կանանց և երիտասարդների հզորացում, հասարակական ակտիվության խթանում
8. Մշակույթի և կրթության զարգացում, նոր հնարավորությունների ստեղծում:
9. Շրջակա միջավայրի պահպանություն, վերականգնվող էներգետիկայի ենթակառուցվածքների հիմնում և զարգացում համայնքում

## 2.3 Համայնքի կառավարման արժեքները

- ✓ Տեղական ինքնակառավարմանը բնակիչների ակտիվ մասնակցություն, «ներքևից՝ վերև» որոշումների կայացման մեխանիզմների կիրառություն՝ հավասարության,

ներառողականության, հանրային շահի պաշտպանության և արդարության սկզբունքների պահպանմամբ:

- ✓ Համայնքի բնակավայրերի զարգացման համաչափության պահպանում, առկա հիմնախնդիրներին անհատական մոտեցման ցուցաբերում:
- ✓ Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության, հաշվետվողականության, բնակիչների հետ անմիջական կապի ապահովում:
- ✓ Համագործակցության պատրաստակամություն համայնքի կառավարման արդյունավետության բարձրացման, զարգացման (և այլ) ոլորտներում շահագրգիռ կողմ հանդիսացող տեղական, միջազգային կազմակերպությունների հետ՝ ինչպես հասարակական, այնպես էլ մասնավոր ոլորտներից:
- ✓ Համայնքի կառավարման գործընթացում նորարարական մեթոդների և գործիքների ներդրում:
- ✓ Համայնքի բնակչության ավանդույթների, կոլեկտիվ մշակույթի նկատմամբ հարգանք:

## Զարգացման ծրագրեր և մոտեցումներ՝ ըստ ոլորտների

### Գյուղատնտեսություն

1. «Դեբեդի հովիտի» բնակավայրերում նոր, բարձրարժեք մշակաբույսերի և ծառատեսակների մշակության խթանում՝ ձիթապտուղ, պիստակ, ընկուզենիներ, հատապտուղներ և այլն:
2. Նոյեմբերյանի «նախալեռնային» համայնքներում ջերմոցային տնտեսությունների, այգեգործության, տեխնիկական մշակաբույսերի ծավալների աճի խթանում:
3. Նորագույն և արդի տեխնոլոգիաների ներդրում գյուղատնտեսության մեջ (ինտենսիվ այգիներ, ոռոգման ժամանակակից համակարգեր, կանաչ գյուղատնտեսության մեթոդոլոգիայի ներդրում, հողի խելացի կառավարման համակարգեր և այլն):
4. Նորարարական ագրո ուսուցման կենտրոնի հիմնում, որտեղ բնակիչները հնարավորություն կունենան ստանալու գյուղատնտեսության վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքներ, կբարելավեն իրենց հմտությունները: Կենտրոնում կգործի նաև ջերմատուն, որտեղ կաճեցվեն սածիլներ և տնկիներ, որոնք կտրամադրվեն տեղի բնակիչներին՝ սեփական հողում դրանց մշակությունը կազմակերպելու նպատակով:
5. Բնակիչների կողմից արտադրված բերքի մթերման հնարավորությունների ստեղծում, սառնարանային տնտեսությունների թվի աճ:
6. Օրգանական և էկո արտադրանքների սերտիֆիկացման, բերքի արտահանման հնարավորությունների խթանում:
7. Գյուղ. մթերքի վերամշակման հնարավորությունների ստեղծում:
8. «Խելացի» անասնապահության խթանում:

*Հնարավոր գործընկերներ և դոնորներ՝*

1. *Ավստրիական զարգացման գործակալություն*
2. *ԵՄ (օրինակ՝ GAIA Armenia ծրագիր)*
3. *USAID*
4. *UNDP*
5. *CARD*
6. *Շեն հիմնադրամ*

## Զբոսաշրջություն

1. Համայնքում գործող «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվել է զբոսաշրջային ներուժի ռեսուրսների քարտեզագրում, SWOT վերլուծություն, զարգացման ռազմավարության մշակում: Վերոնշյալ փաստաթղթերը հասանելի են հետևյալ հղումով: Այս հետազոտության հիման վրա կիրականացվեն զբոսաշրջության զարգացման ծրագրեր:
2. Նոյեմբերյան համայնքի՝ որպես տուրիստական գրավիչ վայրի (դեստինացիայի) բերնդավորում, գործող տուրիստական բիզնեսների համագործակցության «միասնական այցեքարտի» ստեղծում:
3. Դեբեդի հովտի բնակավայրերում անհրաժեշտ է իրականացնել առավելապես ագրո- և գաստրո- տուրիստական զբոսաշրջային պրոդուկտների և բիզնեսների ձևավորում: Այս ուղղությամբ զբոսաշրջության զարգացման նպատակով Լոռու մարզի հետ համագործակցության հաստատում (Սանահին, Հաղպատ, Ախթալա և այլն):
4. Նոյեմբերյանի նախալեռնային բնակավայրերում էկո-, արկածային, գաստրո-, էնո- (գինու), ալկո- տուրիզմի խթանում (մասնավոր սեկտորի հետ համագործակցություն, ենթակառուցվածքների բարելավում, փառատոնների կազմակերպում և այլն): Այս ուղղությամբ զարգացման նպատակով համագործակցության հաստատում Ենոքավանի, Դիլիջանի հետ:
5. Հայաստան-Վրաստան զբոսաշրջիկների հոսքի ներգրավմանն ուղղված ծրագրեր՝ մաքսատանը՝ բուկլետների, ճանապարհներին՝ հատուկ տուրիստական ձևաչափի ցուցանակների տեղադրման, ինֆորմացիոն կենտրոնների գործարկման միջոցով:

*Հնարավոր դոնորներ և գործընկերներ՝*

1. ԵՄ
2. GIZ
3. UNDP
4. USAID
5. Զբոսաշրջության պետական կոմիտե
6. Զբոսաշրջային ասոցիացիաներ, միություններ

## Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

1. Համայնքի էկոհամակարգի պահպանություն, աղբահավաք, վերահսկողական աշխատանքներ:
2. Համայնքում վերականգնվող էներգետիկայի աղբյուրների հասանելիության ապահովում, դրանց ծավալների ավելացում:
3. Համայնքի բնակիչների՝ էներգախնայողության վերաբերյալ իրազեկվածության բարձրացում, բնակարանների և առանձնատների էներգաարդյունավետության բարձրացման խթանում, որպեսզի վերջիններս հնարավորինս քիչ ունենան փայտային վառելիքի կարիք՝ պահպանելով անտառային տարածքները: Անտառային հումքից վառելանյութի ստացման (բրիկետներ) տեխնոլոգիաների ներդրում:
4. Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման և պատասխանատվության զգացումի ձևավորման նպատակով էկոկրթական ճամբարների կազմակերպում դպրոցական տարիքի երեխաների և երիտասարդների համար:
5. Անտառի պահպանման և զարգացման գործում նորարարական տեխնոլոգիաների ներդրում:

*Հնարավոր դոնորներ և գործընկերներ*

1. ՄԱԿ-ի Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (GEF)
2. UNDP
3. ԵՄ

## Սպորտ, առողջ ապրելակերպի խթանում

1. Համայնքի ֆուտբոլային դաշտերի բարեկարգում, մարզահագուստի և մարզագույքի ձեռքբերում:
2. Համայնքում բացօթյա մարզահրապարակների հիմնում/զարգացում: Workout ոճի մրցաշարերի կազմակերպում:
3. Լողավազանների կառուցում/վերանորոգում:
4. Շախմատային առաջնությունների կազմակերպում:
5. Հեծանվային սպորտի զարգացում/առաջնությունների կազմակերպում:
6. Օլիմպիական մարզաձևերի զարգացում:

*Հնարավոր դոնորներ և գործընկերներ*

1. Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա
2. Հայաստանի շախմատի ֆեդերացիա
3. ՀՀ ԿԳՄՍ

## Նորարարական տեխնոլոգիաների ոլորտ

1. Թվային կենտրոնների ստեղծում և զարգացում (Կողբի թվային ստուդիա, Թումո, COAF սմարթ սենյակ և այլն)- առկա և ընթացիկ:
2. Նախադպրոցական զարգացման կենտրոնի հիմնադրում (հնարավոր է COAF-ի հետ համագործակցությամբ):
3. Տեխնոլոգիական հեքըթոնների կազմակերպում:

*Հնարավոր դոնորներ և գործընկերներ*

1. Թումո
2. COAF
3. ՀՀ ԲՏԱ նախարարություն
4. Արմաթ
5. Մայրքրոսֆթ ինովացիոն կենտրոն, Հայաստան
6. Հայաստանյան IT ֆիրմաներ (գումարների նվիրաբերություն, վերապատրաստումներ և այլն):

## Աղետների ռիսկերի կառավարում, քաղաքացիների պաշտպանություն

1. Համայնքում բնական, կենսաբանական և տեխնածին աղետի առկա վտանգների և ռիսկերի մասնակցային արագ գնահատում (ՄԱԳ)- փորձը կա:
2. Համայնքում աղետի ռիսկերի քարտեզագրում, առկա ռիսկերի նվազեցման ուղղված գործողությունների սահմանում, առաջնահերթությունների որոշում:
3. Քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության բարձրացում (տագնապային վարժություններ, ապաստարանների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում):
4. Քաղաքացիների պաշտպանության համար անհրաժեշտ ենթակառուցվածքների գործարկում/բարելավում (շչակների ստուգում, ապաստարանների մաքրում, ամրացում, նորերի կառուցում և այլն):
5. Առաջին բուժօգնության դասընթացների կազմակերպում:

*Հնարավոր դոնորներ և գործընկերներ*

1. Հայաստանում Ճապոնիայի դեսպանատուն
2. UNDP
3. ԱԻՆ
4. Կարմիր խաչ

## Գործարար միջավայրի բարելավում, զբաղվածության և ձեռնարկատիրության խթանում

1. Բնակչության և հատկապես՝ երիտասարդության շրջանում ձեռնարկատիրական գիտելիքների և կարողությունների զարգացում, մրցունակ բիզնես ծրագրերի մշակում:

2. Բիզնես ներդրողների՝ վենչուրային հիմնադրամների, բիզնես-հրեշտակների ներգրավում:
3. Բիզնեսի աջակցմանն ուղղված շրջանառու ներդրումային հիմնադրամի ձևավորում:
4. ՀՀ պետական, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացվող բիզնեսի աջակցության ծրագրերի վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության բարձրացում, նրանց մասնակցության աջակցություն՝ խորհրդատվությունների և վերապատրաստումների եղանակով:

*Հնարավոր դոնորներ և գործընկերներ*

1. ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
2. Հայաստանի բիզնես հրեշտակների ցանց՝ BANA
3. Հայ օգնության ֆոնդ ՀՕՖ՝ ԱՅՈ հարթակ
4. ԵՄ (EU4Bussiness)
5. Awesome/ՕՒԸՄ հիմնադրամ
6. Ջինիշյան հիմնադրամ

## Սոցիալապես խոցելի բնակիչների բարեկեցության բարձրացում, զբաղվածության ապահովում

1. Սոցիալապես խոցելի բնակիչների բարեկեցության բարելավումը պետք է հիմնված լինի վերջիններիս զբաղվածության և տնտեսական անկախության ապահովման վրա: Պարբերական սոցիալական օգնությանը պետք է աստիճանաբար փոխարինեն նրանց կարողությունների զարգացման, ինքնազբաղվածության ապահովման և կամ փոքր ու միջին ձեռներեցության միջոցով եկամուտներ ապահովելու ծրագրեր:
2. Համայնքում սոցիալական ուղղվածության ծրագրերը կունենան, մասնավորապես, 5 հիմնական ուղղվածություն, որոնց վերաբերյալ ծրագրերը կից ներկայացված են.
   ա. 0-18 տ հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ծառայություններ
   բ. 18 տ. բարձր հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ծառայություններ
   գ. Տարեցների խնամքի կենտրոն Նոյեմբերյան խոշորացված համայնքում
   դ. Ընտանիքների աջակցության ծառայություններ
   ե. Կարիերայիկենտրոնի հիմնում, բնակիչների մասնագիտական կողմնորոշման և վերապատրաստումների կենտրոնի հիմնում:
3. Այս ուղղությամբ համայնքային ծրագրերը պետք է հիմնված լինեն համայնքապետարան-մասնավոր սեկտոր-հասարակական կազմակերպություններ բազմակողմանի համագործակցության վրա:
4. Սոցիալապես խոցելի խավերի զբաղվածության ապահովման նպատակով անհրաժեշտ է կազմակերպել կարճաժամկետ վերապատրաստական ծրագրեր՝ ուղղված հնարավոր շահառուներին այնպիսի մասնագիտական գիտելիքների

փոխանցմանը, որոնց պահանջարկն առկա է տեղական շուկայում: Այդպիսիք կարող են լինել՝ արհեստներ, միջին մասնագիտական այլ ուղղություններ:

5. Արագ արձագանքման ծրագրերին զուգահեռ՝ անհրաժեշտ է կազմակերպել սոցիալապես խոցելի բնակիչների հզորացման երկարաժամկետ, հեռանկարային ծրագրեր՝ վերջիններիս շուկայում առավել բարձր մրցունակություն ունեցող մասնագիտությունների ուղղությամբ վերապատրաստելու նպատակով, օրինակ՝ նորագույն տեխնոլոգիական ոլորտում:

*Հնարավոր դոնորներ և գործընկերներ*

1. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
2. ԵՄ
3. ՄԱԿ-ի հիմնադրամներ
4. ԱՄՆ ՄԶԳ

## Կանանց և երիտասարդների հզորացման ծրագրեր

1. Կանանց և երիտասարդների հզորացման տեսանկյունից առաջնային նշանակություն ունի վերջիններիս տնտեսական կարգավիճակի փոփոխությունը, ինչը հնարավորություն կտա մեծացնելու վերջիններիս ազդեցությունն ու ակտիվ ներգրավվածությունը համայնքային կյանքին:
2. Երիտասարդների զարգացման տեսանկյունից առաջնային նշանակություն ունի վերջիններիս զբաղվածության ապահովման և կարիերայի աճի հնարավորությունների ստեղծումը համայնքում, ինչի շնորհիվ հնարավոր կլինի կանխել ուրբանիզացիայի և աշխատանքային միգրացիայի տեմպերը: Այս ուղղությամբ իրականացվող համայնքային ծրագրերն անմիջականորեն փոխկապակցված կլինեն համայնքում գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության զարգացման ծրագրերի հետ:
3. Կանանց հզորացման և հասարակական ակտիվության ապահովման նպատակով անհրաժեշտություն կա ձևավորել հարթակ, որտեղ վերջիններս ինքնիրացման, քաղաքական և համայնքային կառավարման գործընթացներում ակտիվ ներգրավման հնարավորություններ կունենան:

*Հնարավոր դոնորներ և գործընկերներ*

5. ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
6. ԵՄ
7. ՄԱԿ-ի հիմնադրամներ
8. ԱՄՆ ՄԶԳ

# 2022թ. իրականացվելիք ծրագրեր

## Սուբվենցիոն ծրագրեր՝

### ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ

| | Բնակավայրի անվանումը | Ծրագրի նկարագիր | Ծավալ | Ծրագրի արժեքը / մլն դրամ / | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ընդհանուր | Համայնք | Հիմնադրամ | Պետություն |
| ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ | | | | | | | |
| 1 | Նոյեմբերյան | Բարեկամության փողոցի / ԱԳԲԱ բանկ / 210 մ հատված , կա նախագիծ 26 մլն-ի | 3170 | 160,0 | 32,0 | 40,0 | 88,0 |
| | | Գերեզմանների ճանապարհ, 600մ | | | | | |
| 2 | Այրում | Գերեզմանների ճանապարհ, 400մ | | | | | |
| 3 | Կողբ | 20-րդ փողոց , Ավազի ձորից անկետուր թաղ 300 մ հատված | | | | | |
| 4 | Բերդավան | Մանկապարտեզի փողոց 260 մ | | | | | |
| 5 | Ոսկեպար | Թիվ 4 փողոցի 400 մ | | | | | |
| 6 | Բագրատաշեն | 12-րդ փողոց /հրապարակ-Դեբեդավահ ճանապարհ / 1000 մ | | | | | |
| Տուֆապատում | | | | | | | |
| 7 | Նոյեմբերյան | 26 Կոմիսարների փողոցի 250 մ | 1375 | 130,0 | 4,0 | 41,5 | 84,5 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | Կոթի | Թիվ 24 , 25 և 22 փողոցների 500 մ | | | | | |
| 9 | Կողբ | Թիվ 20 փողոցի 450 մ, անկետուր թաղի հատված | | | | | |
| 10 | Դովեղ | 8-րդ փողոց,գյուղապետ փողոց 175 մ | | | | | |
| Լուսավորություն | | | | | | | |
| 11 | Բագրատաշենից-Բաղանիսի վերջ /Ոսկևանի խաչմերուկ / | 27.5 կմ միջպետական ճանապարհ | 33,5 | 100,0 | 20,0 | 10,0 | 70,0 |
| 12 | Բագրատաշեն | Գյուղի սկզբից-մաքսակետ 2,5 կմ | | | | | |
| 13 | Զորական | 4 կմ ,փողոցի համարը կճշտվի | | | | | |
| Մշակույթի տներ | | | | | | | |
| 15 | Ոսկևան | Դահլիճի հիմնանորոգում | | 105,0 | 15,0 | 27,0 | 63,0 |
| 16 | Բագրատաշեն | Տանիքի և լուսամուտների փոխարինում | | | | | |
| 17 | Կողբ | Տանիքի հիմնանորոգում | | | | | |
| Մանկապարտեզներ | | | | | | | |
| 19 | Ոսկեպար | Դպրոցի մասնաշենքի ձևափոխում որպես | 150 | 150 | 30 | 0 | 120 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | մանկապարտեզ , 160 քմ | | | | | |
| 20 | Համայնքի բոլոր մանկապարտեզներ | Ներառական հնարավորության ապահովում և բակերի բարեկարգում | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 645,0 | 101,0 | 118,5 | 425,5 |

## Սոցիալական, կրթական և մշակութային ծրագրեր

*Աղյուսակ 26. Համայնքի կայուն զարգացման հասնելու խնդիրները, արդյունքները և գործողությունները (սոցիալական ոլորտ)*

| հ/հ | Խնդիրները | Միջանկյալ արդյունքները | Անհրաժեշտ գործողությունները | Պահանջվող ռեսուրսները |
|---|---|---|---|---|
| 4 | Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության | 1. Համայնքում ծառայությունների մատուցման համար վերապատրաստվել են նեղ մասնագետներ,<br><br>2. Համայնքում ստեղծվել է սոցիալական համագործակցուփյան ցանց, որը ներառում է համայնքի բոլոր բնակավայրերը, համայնքում ակտիվ քաղաքացիական հասարակության կառույցները և այլ շահագրգիռ կազամակերպություննե,<br><br>3. Տարեկան առնվազն 70 շահառու ստացել են սոցիալական, հոգեբանական, ոչ ֆորմալ ուսուցման, առողջապահական ծառայություններ | • Առկա սոցիալական ծառայությունների քարտեզագրում<br>• Մասնագետների վերապատրաստում<br>• Պոտենցիալ շահառուների քարտեզագրում, հավաքագրում և դասակարգում<br>• Համայնքում գործող կազմակերպությունների հետ սերտ կապերի ստեղծում<br>• Ծառայությունների կազմակերպման համար համապատասխան տարածքի և պայմանների ստեղծում<br>• Բնակիչների ներգրավում ծառայություններում | Կամավորներ, Համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք |
| | | 1. 18 տ. հաշմանդամության համար անձանց ծառայությունների մատուցման համար ներգրավվել են մշակույթի, արհեստի և արվեստի մասնագետներ<br>2. Տարեկան առնվազն 100 շահառու ստացել են սոցիալական, հոգեբանական, ոչ ֆորմալ ուսուցման, առողջապահական ծառայություններ,<br>3. Ապահովել է շահառուների զբաղմունքի և ժամանցի հնարավորությունը համայնքում | • Համաձայնագրերի կնքում նեղ մասնագետների հետ<br>• Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովում՝ գույք, տեխնիկա, աշխատանքային պարագաներ<br>• Բնակչության շրջանում տեղեկատվության տարածում և իրազեկում<br>• Հաշմանդամություն ունեցող անձանց հետաքրքրությունների հետազոտում և քարտեզագրում<br>• Ծառայությունների նախագծում, ժամանակացույցի հստակեցում և հարմարեցում շահառուների կարիքներին<br>• Հաշմանդամության ունեցող անձանց կենտրոն այցելելու օժանդակության տրամադրում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 1. Մեծահասակների համար մատուցվում են ծառայություններ բազմամասնագիտական որակավորում ունեցող թիմի կողմից,<br><br>2. Համայնքում գործող առնվազն 4 կառույցների (դպրոց, մշակույթի տուն, առողջապահություն, սոց. ծառայություններ) ներկայացուցիչ ակտիվ ներգրավված են տարեցների հիմնախնդիրների լուծման գործում,<br><br>3. Տարեկան առնվազն թվով 100 շահառու ստացել են սոցիալական, հոգեբանական, ոչ ֆորմալ ուսուցման, առողջապահական ծառայություններ | • Մասնագետների համալրում<br>• Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում<br>• Շահագրգիռ կառույցների հետ համագործակցության հիմնում, հուշագրերի կնքում,<br>• Համայնքում գործող հասարակական կազմակերպությունների ռեսուրսների ներգրավվում<br>• Շահառուների քարտեղագրում, հավաքագրում,<br>• Շահառուների իրազեկում և ներգրավվում | |
| | | 1. Տարեկան առնվազն թվով 60 շահառու ստացել են սոցիալական, հոգեբանական, ոչ ֆորմալ ուսուցման ծառայություններ<br><br>2. Ձևավորված է բազմամասնագիտական բարձր որոկավորում ունեցող թիմ | • Ձեռք բերել համապատասխան տարածք, գույք, տեխնիկական միջոցներ<br><br>• Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր<br><br>• Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները, հավաքագրել որակյալ մասնագետներ<br><br>• Ստեղծել մասնագետների և կամավորների բազա | |

## «0-18 տ հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ծառայություններ» ծրագրի անձնագիր

(Ծրագրի անվանում)

| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի անմիջական նպատակ | Ծրագրի նպատակն է նպաստել 0-18 տ. հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավմանը, սոցիալական ներառմանը, ինքնուրույն կյանքի և կարողությունների, հմտությունների զարգացմանը, նրանց ներառմանը հասարակության մեջ և համայնքային կյանքին: | | | | | | |
| | Ծառայությունից օգտվող շահառուների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 70 | 70 | 80 | 80 | 80 |
| | 1. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ | | | | | | |
| | Մասնագետների թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 3 | 3 | 4 | 4 | 5 |
| | 2. Համայնքի բնակիչները բավարված են կետրոնում մատուցվող ծառայություններից | | | | | | |
| | Շահառուների՝ ծառայություններից բավարարվածության մակարդակ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 80 % | 80 % | 80 % | 80 % | 80 % |
| | 3. Համայնքում գործում է համագործակցության ցանց | | | | | | |
| | Համագործակցության ցանցում ընդգրկված կազմակերպություններ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 5 | 5 | 7 | 7 | 7 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Առկա սոցիալական ծառայությունների քարտեզագրում<br>1.2 Մասնագետների վերապատրաստում<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ | | | | | | |

| | |
|---|---|
| | 2.1 Պոտենցիալ շահառուների քարտեզագրում, հավաքագրում և դասակարգում<br><br>2.2 Ծառայությունների կազմակերպման համար համապատասխան տարածքի և պայմանների ստեղծում<br>2.3 Բնակիչների ներգրավում ծառայություններում<br><br>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br><br>3.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները<br><br>3.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառուների աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը |
| Ծրագրի բյուջեն | 11 մլն դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ծառայության կազմակերպման համար տարածք, ծրագրով նախատեսված սոցիալական ծառայությունների մասնագետներ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Տրանսպորտային հասանելիություն, |
| Ծրագրի հիմնական շահառուները | 0-18տ հաշմանդամություն ունեցող երեխաներ և նրանց ծնողներ |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Նոյեմբերյան համայնքում 0-ից 18 տարեկան հաշմանդամություն ունեցող անձիք տարիներ շարունակ զրկված են եղել սոցիալական, կրթական, առողջապահական բավարար աջակցությունից: Մշտապես խախտվում է նրանց կրթական և առողջապահական իրավունքը, լիարժեքորեն ներգրավված չեն կյանքի բոլոր ոլորտներում: Հասարակության մեջ պաշտպանված և ապահով չեն զգում:<br><br>0-18 տ հաշմանդամություն ունեցող անձանց ծնողները, ընտանիքի անդամները զբաղվելով վերջիններիս խնամքով, զրկվում են մշտական աշխատանք ունենալու հնարավորությունից: Տեղի կրթական հաստատություններում և սակավ մասնագիտացված երկու կազմակերպություններում՝ <<Հույսի կամուրջ>> ՀԿ-ի, <<Նոյ Աստղ>> ՀԿ-ի ռեսուրսները բավարար չեն նշված խնդիրներ ունեցող անձանց կարիքները լիարժեքորեն բավարարելու համար:<br><br>Տարածքում ունենալով 0-18 տ հաշմանդամություն ունեցող անձանց բազմաբնույթ ծառայություններ մատուցող կենտրոն, լուծվում է համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրը: Ծրագրի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձը ստանում է առողջապահական-վերականգնողական խնամքի ծառայություն:<br><br>Տվյալ կենտրոնում շահառու անձը ըստ նախասիրությունների ստանում է կրթական տարբեր ծառայություններ(մշակութային, ուսուցման), նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն: |

## «18 տ. բարձր հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական ծառայություններ» ծրագրի անձնագիր

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | **Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը** | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Նպաստել համայնքի 18 տ. և բարձր հաշմանդամություն ունեցող անձանց ինքնաբավության, աշխատանքային և մասնագիտական հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը և ակտիվ ներառմանը համայնքի հասարակական գործընթացում: | | | | | | |
| | Ծառայությունից օգտվող շահառուների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 100 | 100 | 120 | 120 | 120 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ | | | | | | |
| | Մասնագետների թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 3 | 3 | 5 | 5 | 5 |
| | 2. Կենտրոնի կողմից մատուցվում եմ որոկյալ ծառայություններ | | | | | | |
| | Մատուցվող ծառայությունների թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 5 | 5 | 7 | 7 | 7 |
| | 3. Համայնքում գործում է համագործակցության ցանց | | | | | | |
| | Համագործակցության ցանցում ընդգրկված կազմակերպություններ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2022 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 7 | 7 | 7 | 7 | 7 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչներ,<br>1.2 Հավաքագրել որակյալ մասնագետներ<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, | | | | | | |

| | |
|---|---|
| | 2.2 Կազմել ծառայությունների մատուցման ժամանակացույցը<br><br>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br><br>3.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները<br><br>3.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառուների աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը |
| Ծրագրի բյուջեն | 12 մլն դրամ |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքում բնակավայրերի քանակը, տարածությունը, տրանսպորտային հասանելիությունը |
| Ծրագրի հիմնական շահառուները | 18 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող անձիք |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Նոյեմբերյան համայնքում ապրող բնակչության մոտ 1%-ը կազմում են 18-ից բարձր հաշմանդամություն ունեցող անձինք:<br><br>Նրանք լիարժեքորեն չեն կարողանում ներառվել հասարակության մեջ: Ժամանակի մեջ նրանց որոշակի հմտությունները չզարգանալով՝ վերանում են: Այդ անձինք չեն ստանում համապատասխան կրթություն և արդյունքում զերծ են մնում աշխատաշուկա մուտք գործելուց: Համայնքում պաշտպանված և անվտանգ չեն զգում, չեն մասնակցում համայնքային կյանքին:<br><br>18 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, հոգեբանական, ոչ ֆորմալ ուսուցման ծառայությունների մատուցման կենտրոնը կլուծի հաշմանդամություն ունեցող անձանց ներառմանը համայնքային կյանքին: |

## «Տարեցների խնամքի կենտրոն Նոյեմբերյան խոշորացված համայնքում» ծրագրի անձնագիր

(Ծրագրի անվանում)

| | | | |
|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | **Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը** | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Նպաստել համայնքի տարեցների բարեկեցիկ և արժանապատիվ ծերության, նրանց զբաղվածության, սոցիալական, հոգեբանական ծառայությունների մատուցման ապահովման գործընթացին | | |
| | Ծառայությունից օգտվող շահառուների թիվ | Ելակետային<br><br>արժեք | Թիրախային արժեքներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 100 | 100 | 120 | 120 | 120 |
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | 1. Կենտրոնի կողմցի մատուցվում են որակյալ ծառայություններ | | | | | | |
| | Մասնագետների թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 4 | 4 | 5 | 5 | 5 |
| | 2. Կենտրոնի կողմցի մատուցվում են որակյալ ծառայություններ | | | | | | |
| | Շահառուների բավարարվածության մակարդակ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 80% | 80% | 80% | 80% | 80% |
| | 3. Համայնքում գործում է համագործակցության ցանց | | | | | | |
| | Համագործակցության ցանցում ընդգրկված կազմակերպություններ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2021 | 2022 | 2021 | 2022 |
| | | - | 5 | 5 | 7 | 7 | 7 |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչներ,<br>1.2 Հավաքագրել որակյալ մասնագետներ<br><br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Բարեկարգել և հարմարեցնել տարածքը ծառայությունների մատուցման համար<br>2.2 Ձեռք բերել անհրաժեշտ գույք և տեխնիկա<br>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>3.1 Քարտեզագրել շահագրգիռ կառույցները<br>3.2 Համագործակցել շահագրգիռ կառույցների հետ կազմակերպելով կլոր սեղան քննարկումներ, մշակել շահառուների աջակցության համատեղ գործողությունների ծրագրեր և ապահովել ծրագրերի իրականացումը | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | 12 մլն դրամ | | | | | | |

| | |
|---|---|
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Մշակութային, ընտանեկան կարծրատիպեր |
| Ծրագրի հիմնական շահառուները | Տարեցներ, միայնակ տարեցներ |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Նոյեմբերյան համայնքի բոլոր բնակավայրերում բավականին մեծ է միայնակ տարեցների (60 տարեկանից բարձր) թիվը, ովքեր ունեն խնամքի և տարբեր ծառայությունների կարիք: Նման խնդիրը համայնքում առաջացնում է զբաղվածության ցածր, բնակչության մահվան ցուցանիշների բարձր մակարդակ, տարեցների մոտ առկա առողջական և հոգեբանական խնդիրներ:<br><br>Համայնքում տարեցների խնամքի որևէ ծառայություն չկա, որի արդյունքում խորանում է տարեցներին խնամող ընտանիքների սոցիալական վիճակը՝ նրանց ընտանիքի անդամները և զավակները խնամելով տարեցներին, չեն կարողանում աշխատել և համայնքում մեծանում է գործազրկության մակարդակը, աղքատություն, ավելանում են միայնակ և խնամքի կարիք ունեցող տարեցներ թիվը և նրանց մահվան ցուցանիշները:<br><br>Համայնքում տարեցները ունեն նաև շփման և ժամանցի կարիք, իրենք համայնքում զգում են միայնակ, լքված և անօգնական:<br><br>Նրանց ապահովելով խնամքի և բազմաբնույթ զբաղվածության ծառայություններով (առողջապահական, հոգեբանական, ուսուցման, կրթական)՝ համայնքում հաղթահարվում է նաև կարծրատիպը, որ տարեցները օգտակար չեն հասարակությանը: |

## «Ընտանիքների աջակցության ծառայություններ» ծրագրի անձնագիր

(Ծրագրի անվանում)

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը | **Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը** | | | | | | |
| Ծրագրի անմիջական նպատակ | Խթանել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին մատուցվող ծառայությունների միջոցով դառնալ ինքնաբավ և համայնքում կավելանա բարեկեցիկ ընտանիքների թիվը: | | | | | | |
| | Ծառայությունից օգտվող շահառուների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 60 | 60 | 70 | 70 | 70 |
| | 1. Համայնքում գործում է ընտանիքի աջակցության կենտրոն | | | | | | |
| | | Ելակետային | Թիրախային արժեքներ | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագրի միջանկյալ արդյունքներ | Ծառայությունների թիվ | արժեք | | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 5 | 5 | 6 | 6 | 7 |
| | 2. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ | | | | | | |
| | Մասնագետների թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 3 | 3 | 5 | 5 | 7 |
| | 3. Շահառուների ընտանիքներ ստանում են մասնագիտացված ծառայություններ | | | | | | |
| | Շահառուների բավարարվածության աստիճան | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | 2021 | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 75% | 75% | 75% | 75% | 75% |
| Ծրագրի հիմնական գործողությունները | 1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>1.1 Ձեռք բերել համապատասխան տարածք, գույք, տեխնիկական միջոցներ<br>1.2 Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր<br>2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>2.1 Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները, հավաքագրել որակյալ մասնագետներ<br>2.2 Ստեղծել մասնագետների և կամավորների բազա<br>3-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ<br>3.1 Սահամանել անհրաժեշտ ծառայությունների ցանկը, ստանդարտները և չափորոշիչները<br>3.2 Կազմել ծառայությունների մատուցման ժամանկացույցը<br>3.3 Ներգրավել շահառուներին ըստ սահմանված չափորոշիչների և ըստ գնահատված կարիքների ներառել ծառայությունների ծրագրերում | | | | | | |
| Ծրագրի բյուջեն | 12 մլն դրամ | | | | | | |
| Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ | Ծառայության կազմակերպման համար տարածք, մասնագետներ, տրանսպորտ | | | | | | |
| Ծրագրի հիմնական ռիսկերը | Համայնքի բնակավայրերի հետ տրանսպորտային հաղորդակցության խնդիրներ, իրազեկման ցածր մակարդակ | | | | | | |

| | |
|---|---|
| Ծրագրի հիմնական շահառուները | Համայնքի խոցելի ընտանիքներ |
| Ծրագրի սկիզբ և ավարտ | 2022-2026 |
| Ծրագրի համառոտ նկարագրություն | Նոյեմբերյան համայնքում բնակչության աղքատության ցուցանիշը բարձր է միջին հանրապետականից: Ընտանիքների մոտ 27.3% -ը աղքատ են, որից 1080 ընտանիք ընդգրկված են պետական աջակցության ծրագրերում:<br><br>Այդ ընտանիքները համայնքում բավարար չափով չեն ստանում աջակցման ծառայություններ: Այդ ընտանիքները սոցիալապես կայացած չեն, չեն կարողանում իրացվել հասարակության մեջ թե սոցիալապես, թե իրացնել իրենց տնտեսության արդյունքում ստացված սարտադրանքը: Նման ընտանիքները «հարմար են զգում» իրենց աղքատ միջավայրում և չեն փորձում խնդիրների հաղթահարման ինքնուրույն ուղիներ որոնել:<br><br>Համայնքում կարիք կա ծառայությունները մատուցելով բարձրացնել նշված ընտանիքների սոցիալական ապահովվածության մակարդակը՝ տրամադրելով սոցիալ-հոգեբանական, առողջապահական աջակցություն, ինչպես նաև ընտանեվարման խորհրդատվություններ: |

## «Մասնագիտական աճի, կարերիայի կենտրոն» ծրագրի անձնագիր

(Ծրագրի անվանում)

Ներածություն

Նոյեմբերյանի 19 բնակավայրերում երիտասարդների համար մշակութային, ժամանցի, ինքնարտահայտման, ստեղծագործելու հնարավորությունները սակավ են: Համայնքում ապրող երիտասարդներին հուզող հիմնական խնդիրներից մեկը համայնքում զվարճանքի, երիտասարդական կենտրոնների բացակայությունն է:

Մասնագիտական աճի, կարերիայի կենտրոնում երիտասարդները կստանան հաղորդակցման առաջնային գիտելիքները, ձեռք են կբերեն աշխատաշուկայում մասնագիտական համապատասխան աշխատանք ստանալու համար անհրաժեշտ հմտություններ: Բազմաբնույթ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի շնորհիվ մեր երիտասարդները և համայնքի հետաքրքրված բնակիչները կսովորեն օտար լեզուններ, կստանան ճշգրիտ տեղեկատվության ինքնուրույն հավաքագրման հմտություններ, համակարգչային գիտելիքներ: Կենտրոնը կնպաստի քաղաքացիների շրջանում թվային հմտությունների զարգացմանը, նաև ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպմանը:

*Ծրագրի արժեքը՝ 15 մլն դրամ:*

| h/h | Խնդիրները | Միջանկյալ արդյունքները | Անհրաժեշտ գործողությունները | Պահանջվող ռեսուրսները |
|---|---|---|---|---|
| 4 | Համայնքի բնակչության լրացուցիչ կրթության ապահովում | • Համայնքում ծառայությունների մատուցման համար վերապատրաստվել են նեղ մասնագետներ,<br><br>4. Համայնքում ստեղծվել է կրթական համագործակցության ցանց, որը ներառում է համայնքի բոլոր բնակավայրերը, համայնքում ակտիվ քաղաքացիական հասարակության կառույցները և այլ շահագրգիռ կազամակերպություններ,<br><br>3.ծառայությունների մատուցման համար ներգրավվել են մշակույթի, արհեստի և արվեստի մասնագետներ<br>4.Ապահովվել է երիտասարդների զբաղմունքի և ժամանցի հնարավորությունը համայնքում<br>5.Տարեկան առնվազն 100 բնակիչ ստացել են կրթական, ոչ ֆորմալ ուսուցման, ծառայություններ | 4. Կրթական ծառայությունների քարտեզագրում<br>• Մասնագետների վերապատրաստում<br>• Պոտենցիալ շահառուների քարտեզագրում, հավաքագրում և դասակարգում<br>• Համայնքում գործող պետական կառույցների և ոչ ֆորմալ կազմակերպությունների հետ սերտ կապերի ստեղծում<br>• Ծառայությունների կազմակերպման համար համապատասխան տարածքի և պայմանների ստեղծում<br>• Բնակիչների ներգրավում ծառայություններում<br>• Համաձայնագրերի կնքում նեղ մասնագետների հետ<br>• Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովում՝ գույք, տեխնիկա, աշխատանքային պարագաներ | Կամավորներ, Համայնքի մարդկային և մասնագիտական ռեսուրս, բարեգործական կազմակերպություններ, միջազգային դոնորներ, տեղեկատվական նյութեր, գույք |
| | | 1.Ձևավորված է բազմամասնագիտական բարձր որակավորում ունեցող թիմ | ▪ Ծառայությունների նախագծում, ժամանակացույցի հստակեցում և հարմարեցում շահառուների կարիքներին | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | 1. *Մասնագետների համալրում*<br>• *Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում*<br><br>• *Շահագրգիռ կառույցների հետ համագործակցության հիմնում, հուշագրերի կնքում,*<br><br>• *Համայնքում գործող հասարակական կազմակերպությունների ռեսուրսների ներգրավվում*<br><br>• *Կազմել ծառայությունների նկարագրերը, մեթոդաբանությունը, տեխնիկական առաջադրանքները, սահմանել ներքին աշխատանքային կանոնակարգեր և աշխատանքի էթիկական նորմեր*<br><br>• *Սահմանել մասնագետների որակավորման չափորոշիչները, հավաքագրել որակյալ մասնագետներ*<br>• *Ստեղծել մասնագետների և կամավորների բազա*<br>• | |
| | | | | |

| | |
|---|---|
| **Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը** | *Մասնագիտական աճի, կարերիայի կենտրոն* |
| **Ծրագրի անմիջական նպատակ** | **Ծրագրի նպատակն է նպաստել համայնքի բնակիչների կյանքի որակի բարելավմանը, կրթության և օժանդակության միջոցով նպաստել երիտասարդների, կանանց անձնական և մասնագիտական հմտությունների զարգացմանը, ինքնուրույն կյանքի և կարողությունների, հմտությունների զարգացմանը,** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծառայությունից օգտվող շահառուների թիվ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | --- | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 100 | 100 | 110 | 110 | 110 |
| | 1. Կենտրոնում ներգրավված են հմուտ մասնագետներ | | | | | | |
| | Մասնագետների թիվը | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | ---- | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 5 | 5 | 6 | 6 | 6 |
| | 4. Համայնքի բնակիչները բավարված են կետրոնում մատուցվող ծառայություններից | | | | | | |
| | Շահառուների՝ ծառայություններից բավարարվածության մակարդակ | Ելակետային արժեք | Թիրախային արժեքներ | | | | |
| | | --- | 2022 | 2023 | 2024 | 2025 | 2026 |
| | | - | 80 % | 80 % | 80 % | 80 % | 80 % |
| | 5. Համայնքում գործում է համագործակցության ցանց | | | | | | |
